

արմաւենի և տախտակն գլխոյն ձիթենի» (Տար. Ա. էջ 536), կամ ուրիշ բացատրութեամբ՝ «Անոր ոտքերը բւեռեցին կիպարիսին վրայ, ձեռքերը՝ արմաւենիին, նոճին անոր մարմինը կը ծակէ, գլխուն վրայ կը դրուի ձիթենին» (L. V. C. էջ 274):

Այս առթիւ յիշենք նաև խաչի ծառին նկատմամբ տարբեր աւանդութիւն մը՝ ուրիշ աղբիւրէ առնուած (Աւեստրան Նիկոդիսնուի, Գլ. ԺԹ.):

«Ազամ հիւանդանալով՝ իր որդին Սեթ գնաց դըրախտի դուռը, գթութեան ծառէն իւղ խնդրեց օծելու համար իր հօրը մարմինը որպէսզի առողջանայ: Որքայէլ հրեշտակապետը երեցաւ անոր եւ ըսաւ. մի՛ լար և մի՛ ջանար իւղ ընդունիլ գթութեան ծառէն, վասնզի քեզի համար անկարելի է ընդունիլ զայն՝ հինգ հազար հինգ հարիւր տարի չանցած: Սակայն կը կարծուի թէ Ազամէն մինչեւ Փրկչին Չարչարանքը անցած է հինգ հազար չորս հարիւր իննիսուն և ինը տարիներ: Ուրիշ տեղ կը կարգացուի նաև թէ հրեշտակը տուաւ փոքրիկ ճիւղ մը եւ հրամայեց անոր տնկել Լիրանան լեռան վրայ: Բայց յունաց անվաւեր պատմութեան մը մէջ կը կարգացուի թէ հրեշտակը անոր տուաւ փայտէն այն ծառին՝ որուն պտուղէն Ազամ մեղանչեց, և անոր տեղեկացուց թէ իր հայրը պիտի բժշկուի երբ այս փայտը պտղաբեր ըլլայ: Իր դարձին՝ Սեթ, հայրը մեռած գտաւ և այս ճիւղը տընկեց անոր գերեզմանին վրայ: Անիկա աճելով եղաւ ծառ մը որ մինչեւ Սողոմոնի ժամանակ գոյութիւն ունէր» (E. F. B. էջ 119):